Հաստատված է
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի
«12» սեպտեմբերի 2023 թ. № 16.1 որոշմամբ

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՐԳ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի № 752-Ն և 2015 թվականի հոկտեմբերի 1-ի № 1122-Ն որոշումների հիման վրա «Սևան» ազգային պարկի (այսուհետ՝ Պարկ) տարածքում ստեղծված և չկահավորված հանրային լողափերի (այսուհետ՝ Լողափ) բարեկարգման, կահավորման և սպասարկման տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Լողափը բարեկարգման, կահավորման և սպասարկման են տրամադրվում մրցութային կարգով՝ «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (այսուհետ՝ ՊՈԱԿ):

II. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

3. Լողափը բարեկարգման, կահավորման և սպասարկման համար մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) վերաբերյալ հրապարակային ծանուցումը հրապարակվում է Մրցույթն անցկացնելուց 30 օր առաջ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների, զանգվածային լրատվության միջոցներով, շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) մրցույթ կազմակերպչի (այսուհետ՝ Կազմակերպիչ) անունը (անվանումը),

2) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը և վայրը (հասցեն, հեռախոսահամար),

3) Լողափի նկարագիրը՝

ա. անվանումը, գտնվելու վայրը (առկայության դեպքում՝ հեռավորությունը հարևան օբյեկտներից),

բ. սահմանները, հողամասի չափը (մակերեսը), հողամասի հատակագիծ,

գ.հողամասի օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների, էլեկտրականության, ջրի, գազի ենթակառուցվածքների առկայությունը,

դ. հողամասի նկատմամբ սահմանափակումների (այդ թվում՝ սերվիտուտների) վերաբերյալ տեղեկատվությունը

4) Լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման իրավունքի ժամկետները,

5) Լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման դիմաց վճարի մեկնարկային գինը,
6) նախավճարի չափը, վճարման կարգն ու ժամկետները,
7) շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նվազագույն անհրաժեշտ միջոցառումները,
8) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝
ա.հայտ /համաձայն ձև 3-ի/,
բ. անձնագրի /կամ պետական գրանցման վկայականի պատճենը
գ. մրցույթային փաթեթը (ներդրումային ծրագիր-նախագիծ)՝ փակ ծրարով:
9) Մրցույթի անցկացման նիստերի օրը, ժամը և վայրը (հասցեն, հեռախոսահամար),
10) Մրցույթի գնահատման և հաղթողին որոշելու չափորոշիչները:

5. Հայտերի ընդունվում են սկսած հրապարակային ծանուցման օրվանից:

6. Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

7. Հրապարակային ծանուցման պահից Կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն ընձեռել, որ ցանկացողները ծանոթանան հայտերի ներկայացման կարգին:

III. ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

8. Մասնակցել ցանկացող ֆիզիկական (անհատ ձեռնարկատեր) և իրավաբանական անձինք հայտերի ներկայացման մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան Կազմակերպչին ներկայացնում են հայտ:

9. Յուրաքանչյուր մասնակից յուրաքանչյուր լողափի համար կարող է ներկայացնել միայն մեկ հայտ:

10. Հայտին կից ներկայացնում են մրցույթային փաթեթները՝ սոսնձված և ստորագրված փակ ծրարով:

11. Ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.
1) հրապարակային ծանուցման մեջ նշված հայտի ներկայացման վայրը (հասցեն),
2) «չբացել մինչև մրցույթի անցկացման օրը» բառերը:

12. Հայտը գրանցվում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը,

13. Կազմակերպիչը մասնակցին տալիս է հայտն ընդունելու մասին ստացական՝ համաձայն Ձև N 2-ի:

14. Սույն կարգի պահանջներին չհամապատասխանող հայտերը, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված հայտերն մերժվում և վերադարձվում են ներկայացնողին:

15. Մասնակիցները, մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը:

16. Հայտի փոփոխությունը կատարվում է սույն կարգով հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

17. Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար դրա անցկացման մասին հայտարարության մեջ նշված չափով մուծում են նախավճար, որի գումարը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5 տոկոսը: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը ՊՈԱԿ-ի հաշվեհամարին:

18. Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

19. Մրցույթում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորությունների կատարման հաշվում:

20. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը:

IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

21. Կազմակերպիչը, նախքան ծանուցումը հրապարակելը, ստեղծում է հինգ անդամից բաղկացած մրցությանին հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ներառյալ Նախագահը:

22. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) 1 անձ ՊՈԱԿ-ի խորհրդի կազմից (հանձնաժողովի նախագահ),
2) 2 անձ ՊՈԱԿ-ից,
3) 1 անձ Գեղարքունիքի մարզպետարանից:
4) 1 անձ Շրջակա միջավայրի նախարարությունից:

23. **Հանձնաժողովը՝**

1) հաստատում է հրապարակային ծանուցման հայտարարության տեքստը,
2) բացում և գնահատում է հայտերը,
3) կայացնում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու կամ որևէ այլ հաղթող չճանաչելու վերաբերյալ որոշում:

24. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են հանձնաժողովի նախագահի կողմից:

25. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է նրա անդամների 2/3-ը:

26. Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի քարտուղարը ձայնի իրավունք չունի:

27. Հանձնաժողովի անդամի կողմից լրացվում և ստորագրվում է քվեաթերթիկ՝ համաձայն Ձևի:

28. Հանձնաժողովի անդամների կողմից մրցութային փաթեթների գնահատման սկզբունքներն են՝

1) ներկայացված մրցութային փաթեթների համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին և պայմաններին,
2) առաջարկվող բարձր վճարի չափը,
3) օբյեկտի կարճ ժամանակում շահագործման հնարավորությունը (իրատեսական ժամկետը),
4) ներդրումների չափը (ֆինանսական երաշխիքների առկայությունը),
5) նախատեսվող գործունեության կայունությունը (շարունակականությունը),
6) սոցիալ-տնտեսական բաղադրիչ (ստեղծվող աշխատատեղերի թիվը. ազդեցությունը տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա),
7) ռիսկերի գնահատումը և դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումների առկայությունը:

29. **Հանձնաժողովի նախագահը՝**

1) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում է դրանք,
2) հանձնաժողովի անունից ստորագրում է հանձնաժողովի որոշումները և նիստերի արձանագրությունները:

30. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականությունները նախագահի գրավոր համաձայնությամբ կատարում է Հանձնաժողովի անդամներից մեկը:

31. **Հանձնաժողովի քարտուղարը՝**

1) ընդունում է հայտերը, գրանցում համապատասխան գրանցամատյանում,
2) կազմում է Հանձնաժողովի նիստի օրակարգը,
3) նիստի անցկացման վերաբերյալ հրավերներ է ուղարկում Հանձնաժողովի անդամներին, պատրաստում և տրամադրում է անհրաժեշտ փաստաթղթերը,
4) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը,
5) Հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը ներկայացնում է Կազմակերպչին:

32. Սահմանել, որ Հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները և Հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրվող այլ փաստաթղթերը ստորագրվելուց հետո վավերացվում են կնիքով:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

33. Մրցույթն անցկացվում է հրապարակային ծանուցումից առնվազն **30 (երեսուն)** օր հետո:

34. Մրցութային փաթեթները բացվում են Մրցույթի օրը՝ Հանձնաժողովի նիստում:

35. Մրցույթի օրը նիստում հրապարակվում են՝

1) հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի անունը (անվանումը),
2) հայտեր ներկայացնելու համապատասխանությունը սույն կարգին և հայտերի ներկայացման մասին հրապարակային ծանուցման պահանջներին,
3) ամփոփ տվյալներ հայտերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

36. Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հայտերի բացման, ինչպես նաև հայտերի ամփոփման ժամանակ:

37. Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են ծանոթանալ նիստերի արձանագրություններին:

38. Մրցույթի արդյունքում կազմվում է արձանագրություն, որտեղ նշում է՝

1) Մրցույթի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների անուն ազգանունները,
2) մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը,
3) տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին,
4) հաղթողի անունը (անվանումը),
5) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

39. Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

40. Արդյունքներն ամփոփելու և հաղթողին ճանաչելու օրը Կազմակերպիչը և հաղթող ճանաչված մասնակիցը ստորագրում են արդյունքների մասին արձանագրությունը:

41. Հաղթողը պարտավոր է 3-օրյա ժամկետում ներկայանալ ՊՈԱԿ, կնքել պայմանագիր: 3-օրյա ժամկետում պայմանագիր չկնքելու դեպքում մասնակիցը զրկվում է

պայմանագիր կնքելու իրավունքից: Հանրային լողափի սպասարկումը ենթակա է նոր հայտերի ներկայացման:

VI. ԼՈՂԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԿԱՀԱՎՈՐՄԱՆ (ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

42. Լողափնյա գոտու տեխնիկական բնութագրերն են՝

1) լողափնյա գոտու տարածքի մակերեսը որոշվում է՝ ելնելով մեկ չափահաս հանգստացողի համար՝ առնվազն 8 քառ. մետր, մեկ երեխայի համար՝ առնվազն 5 քառ. մետր հաշվարկից, ընդ որում, լողափի գոտու եզրագծի նվազագույն ձգվածությունը մեկ մարդու համար կազմում է 0,25 մետր, իսկ լողալու գոտու ջրի հայելու մակերեսը՝ մեկ մարդու համար՝ 10 քառ. մետր,

2) Լողափնյա լողալու գոտու ջրի հայելու մակերեսը, հստակ պետք է նշված լինի լողաններով,

3) հանդերձարան-խցիկներ (հանգստացողների 20 տոկոսի հաշվարկով՝ 100 մարդու համար՝ 5 խցիկ, 1 մարդու համար՝ 1,2-1,3 քառ. մետր մակերեսով), այդ թվում՝ առնվազն 1 հանդերձարան խցիկը նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ գործող նորմերին համապատասխան

4) սոլյարիում (հանգստացողների 30 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3-5 քառ. մետր մակերեսով),

5) օդահարթակ-աերարիում (հանգստացողների 8-10 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3,5-4,5 քառ. մետր),

6) տենտեր, հովանոցներ (հանգստացողների 30 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3,5 քառ. մետր),

7) լողափնյա գոտու մանկական հատվածը կարող է կահավորվել տոբոգանով (H = 2,5-3,0 մետր՝ մեկ ելքով դեպի լիճ), շվաքարաններով, ավազամաններով, մանկական ջրավազաններով, ճոճանակներով, ընդ որում, մանկական հատվածի լողալու գոտու հատակը պետք է ունենա փոքր թեքություն՝ ոչ ավելի, քան 70 սանտիմետր խորությամբ,

8)աղբանոթներ՝ 50 մարդու համար՝ 1 աղբանոթ հաշվարկով,÷

9.Լողափնյա գոտին պետք է ունենա դեպի լիճ տանող ճանապարհներ (ուղիներ, անցուղիներ), որոնք անցանելի կլինեն նաև սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց համար:

43. Բուֆերային գոտու տարածքի կահավորման և բարեկարգման տեխնիկական բնութագրերն են՝

1) դրամարկղային տաղավարները՝ վճարովի ծառայություններ տրամադրող լողափում (առանձին տաղավարի տեսքով կամ վարչական մասի կազմում՝ 1 դրամարկղը՝ 0,5-1,0 հազ. հաճախորդի համար հաշվարկով),

2) ցնցուղարանները (75 մարդու համար՝ 2-4 ցնցուղ, բայց առնվազն 2 ցնցուղ

հաշվարկով, առնվազն 1 ցնցուղարանը նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանեցնելով գործող նորմերին), խմելու ջրի ծորակները (200-300 մարդու համար՝ 1 ծորակ, բայց առնվազն 1 ծորակ հաշվարկով, առնվազն 1 ծորակը նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանեցնելով գործող նորմերին): Թույլատրվում է ցնցուղարանների ջուրը տաքացնել արևի ճառագայթների ջերմությամբ,

3) զուգարանները, որոնք տեղադրվում են լողափի գոտուց առնվազն 50 մետր հեռավորության վրա (50 մարդու համար՝ 1 զուգարանակոնք և 1 միզաման, բայց առնվազն 2 զուգարանակոնք և 1 միզաման),առնվազն 1 զուգարանը նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանեցնելով գործող նորմերին:

4) աղբի կոնտեյներները, որոնք պետք է ունենան կողպվող կափարիչներ, տեղադրված լինեն հարթակների վրա և ունենան հարմար մերձատար ուղիներ,

5) բուֆերային գոտում կարող են տեղադրվել գույքի վարձույթի կետեր, բուժկետ, սրճարան-տաղավարներ, առևտրի կրպակներ (հյութեր, պաղպաղակ և այլ սննդամթերք, հուշանվերներ, լողի պարագաներ և այլն), լողափի սպասարկումն ապահովող այլ ոչ հիմնական օբյեկտներ,

6) բուֆերային գոտու սպորտային հատվածը կարող է ներառել վոլեյբոլի, բադմինթոնի և այլ մարզահրապարակներ, ինչպես նաև այլ հարթային կառույցներ:

44. Լողափի բնորոշ չափորոշիչներն են՝

1) Ավճար մատուցվող ծառայություններ՝

ա. հանգստացողների ազատ մուտք,

բ. Ավտոկայանատեղի՝ հարմարեցված նաև հաշմանդամություն ունեցող անձանց,որոնք մոտ կլինեն հասանելի ուղիներին կամ լողափերի մուտքերին,

գ. խաղահրապարակ,

դ. հանդերձարաններ,

ե. սանհանգույցներ,

զ. շվաքարաններ

է. Ցնցուղարաններ

ը. Հաշմանդամություն ունեցող կամ սակավաշարժուն անձանց համար առնվազն 1 հատուկ լողափի համար նախատեսված ռեզինե անվասայլակ,որը հնարավորություն կտա շարժվել ինչպես ավազի, այնպես էլ ջրի վրա:

45. Լողափի և բուֆերային գոտու ռեժիմը՝

1) Լողափնյա գոտում արգելվում է՝

ա.միացնել բարձր երաժշտություն,

բ.ծխել,

գ.օգտագործել ալկոհոլ,

դ.աղտոտել տարածքը,

ե.փչացնել լողափի գույքը,

զ.լողալ լողալու գոտու լոգաններով սահմանված տարածքից դուրս,

է.տեղաշարժել կամ վնասել լոգանները,

ը. լողալը երեկոյան 20:00-ից հետո,

թ. երեխաներին թողնել առանց հսկողության,

ժ.խարույկ վառել:

2) Բուֆերային գոտում՝

ա. արգելվում է մեքենաների մուտքը (բացառությամբ՝ ավտոկայանատեղիի),

բ. տաք ուտեստների պատրաստումն իրականացնել Լողափը սպասարկողի կողմից մեկ կետից Լողափի լողափնյա գոտուց առնվազն 30 մետր հեռավորության վրա՝ ծխատարի առկայությամբ,

գ. թույլատրվում է թույլ ալկոհոլային խմիչքների օգտագործումը (գարեջուր, կոկտեյլներ և այլն),

գ. արգելվում է թունդ ալկոհոլային խմիչքների օգտագործումը (օղի և այլն),

46. Լողափի տարածքում թույլատրվում է երաժշտությունը միայն մեկ կետից, դրա համար նախատեսված վայրերում:

47. Լողափում տեղադրվում են տեղեկատվական ցուցանակներ, որոնցում նշվում է՝

1) հանրության կողմից պարտադիր պահպանման ենթակա կանոններն ու պահանջները,

2) Անվճար ծառայությունների ցանկը,

3) առաջին օգնության և փրկարարական ծառայության վերաբերյալ տեղեկատվություն (թեժ գիծ),

4) լողափի սխեման և լողալու գոտու խորությունը,

5)լողափը սպասարկող կազմակերպության վերաբերյալ տվյալներ,

6)Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար տեղեկատվական, նախազգուշացնող և այլ վահանակներ:

VII. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

48. Լողափը բարեկարգել, կահավորել և սպասարկել սույն կարգի VI-րդ բաժնի 42-ից 47-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան՝ ընթացքում ապահովելով գույքի սարքին և բարեկարգ վիճակը:

49. Լողափը բարեկարգել, կահավորել և սպասարկել իր կողմից հայտով ներկայացված նախագծին և ներդրումային ծրագրին համապատասխան, որտեղ պետք է ներառել դրույթներ հանրային լողափում միջավայրի սոցիալական որակը և հարմարավետությունը, կառուցապատման միասնականությունը, ինժեներական ապահովումը, տրանսպորտային և կոմունալ-կենցաղային սպասարկումը, տարածքների

կանաչապատումը և բարեկարգումը, սպասարկման և ենթակառուցվածքի օբյեկտների, ընդհանուր օգտագործման տարածքների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

50. Ըստ անհրաժեշտության, սահմանված կարգով ապահովել ջրօգտագործման թույլտվության առկայությունը:

51. Ըստ անհրաժեշտության, ապահովել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով փորձաքննական դրական եզրակացության ստացումը:

52. Ապահովել տարածքի խմելու և կենցաղային ջրով:

53. Ապահովել կեղտաջրերի լոկալ մաքրման կայանների (այդ թվում՝ սեպտիկ հորեր) տեղադրումը, սանհանգույցների առկայությունը:

54. Ապահովել տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը՝ պայմանագիր կնքելով աղբահանության իրականացնող կազմակերպությունների հետ կամ տարածքի մարքությունն ու աղբահանությունն իրականացնել սեփական միջոցներով:

55. Ապահովել Լողափի ենթակառուցվածքների անխափան աշխատանք:

56. Լողափի տարածքում ծախսված էլեկտրաէներգիայի, ջրի, հողի հարկի և նմանատիպ այլ ծախսերը փոխհատուցել ՊՈԱԿ-ին:

57. Տարեկան վճարի մեկնարկային գինը 1 քմ-ի համար «Սևան» ազգային պարկի հողամասերի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքով տրամադրման նպատակով ՊՈԱԿ-ի խորհրդի կողմից սահմանված տվյալ տարածքի գնի 20 տոկոսը:

58. Պայմանագիրը կնքվում է 7 տարի ժամկետով, կնքման օրվանից 2 տարի հաղթողը ազատվում է վճարը վճարելու պարտավորությունից:

59. Բացառել լողափի շահագործումը առանց անվտանգության, ջրափրկարարական ծառայության և բուժկետի:

60. Տարածքում չկառուցել հիմնական շինություններ, ինչպես նաև նախագծով չհաստատված այլ շինություններ:

61. Հանրային լողափի ջրային տարածքում լողամիջոցների մուտքն ու շահագործումն իրականացնել ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի №1945-Ն որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան:

62. Ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2009թ. ապրիլի 16-ի №6-Ն հրամանով հաստատված հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջները:

63. Չիրականացնել ՀՀ օրենսդրությանը հակասող և Կազմակերպչի հետ կնքվելիք պայմանագրով չնախատեսված գործողություններ:

64. Չի կարող իրականացնել իր կողմից ներկայացված ներդրումայնին ծրագրում չներառված ծառայություններ:

65.Հանրային լողափերում տեղադրված կամ տեղադրվող զուգարանների,

ցնցուղարանների, հանդերձարանների, բուժկետի մուտքերը, դեպի լիճ տանող ճանապարհը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի կարիքներին:

66. Մշակել արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլան-սխեմա հաշմանդամություն ունեցող անձանց համար, որը կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգությունը՝ տարհանման մատչելի ուղիների, հաղորդակցության հստակ մեթոդների, վերապատրաստված անձնակազմի օգնության միջոցով:

Ձև N 1

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ

Անունը	Ազգանունը	Պաշտոնը

	մրցույթի ներկայացված փաթեթը (փաթեթները)	կողմ	դեմ
1.			
2.			
3.			
4.			
5.			
Ստորագրությունը			

ՍՏԱՑԱԿԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՈՂԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ես՝ _____
(Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը անձնագրի տվյալները)

_____

20__ թվականի _____- ի ____ -ին դիմել եմ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ մասնակցելու «Սևան» ազգային պարկի հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման իրավունքով տրամադրման համար հայտարարված մրցույթին:

Հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի քարտուղարից ստացել եմ _____ Հանրային լողափի՝

- տվյալները,
- քարտեզը,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը,
- ՀՀ օրաթերթում 20__ թվականի _____-ի __-ին տպագրված հայտարարության օրինակը,
- մրցույթի անցկացման կանոնակարգը:

Ես՝ _____
(Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը անձնագրի տվյալները)

_____

20__ թվականի _____- ի ____ -ին դիմել եմ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ մասնակցելու «Սևան» ազգային պարկի հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման իրավունքով տրամադրվման համար հայտարարված մրցույթին:

Հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովի քարտուղարից ստացել եմ _____ Հանրային լողափի՝

- տվյալները,
- քարտեզը,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը,
- ՀՀ օրաթերթում 20__ թվականի _____- ի __-ին տպագրված հայտարարության օրինակը,
- մրցույթի անցկացման կանոնակարգը:

Մինչև 20___ թվականի _____ - ի _____-ի ժամը ____:____ կայանալիք մրցույթին մասնակցելու դեպքում պարտավորվում եմ ներկայացնել մրցույթի մասնակցության ծրագիրը՝ փակ և ստորագրված ծրարով: Տեղյակ եմ, որ մրցույթը կայանալու է 20___ թվականի _____-ին ժամը ____:____ -ին: Տեղեկացել եմ, որ ծրագիրը պետք է ներկայացնեմ համաձայն «Հանրային լողափի կահավորման, բարեկարգման և սպասարկման կարգ»-ի պահանջների:	Մինչև 20___ թվականի _____ - ի _____-ի ժամը ____:____ կայանալիք մրցույթին մասնակցելու դեպքում պարտավորվում եմ ներկայացնել մրցույթի մասնակցության ծրագիրը՝ փակ և ստորագրված ծրարով: Տեղյակ եմ, որ մրցույթը կայանալու է 20___ թվականի _____-ին ժամը ____:____ -ին: Տեղեկացել եմ, որ ծրագիրը պետք է ներկայացնեմ համաձայն «Հանրային լողափի կահավորման, բարեկարգման և սպասարկման կարգ»-ի պահանջների:
_____ Անուն, ազգանուն կամ կազմակերպության անվանում	_____ Անուն, ազգանուն կամ կազմակերպության անվանում

Ձև 3
Հանրային լողափը բարեկարգման, կահավորման
և սպասարկման տրամադրման
մրցութային հանձնաժողովին

Դիմողի տվյալները

Դ Ի Մ ՈՒ Մ
Մասնակցության հայտի

_____ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
(մասնակցի անվանումը)

_____ ծածկագրով հայտարարված հանրային լողափերի սպասարկման
(ծածկագրի համարը)

նպատակով հայտարարված հայտերի ընդունման _____չափաբաժնին
(չափաբաժնի համարը)

և հայտերի ներկայացման պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____,
  հարկի վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____,
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____,
  գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ _____,
  հեռախոսահամար
- հաշվեհամարն է՝ _____:
  հաշվեհամարը

_____ _____
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«___» «_____» 20------թ